

սրճարան մոլտքը կը մերժէ ձեռքը-ոտքը բռնող մարդերուն, ու քիչիկ մըն ալ բարքերու նախնական ու դանդաղ գնացքը իրարու էին եկած մէկ հատի վրայ պահելու թիւը այդ անիծեալ շէնքերուն, որոնք աւելի դիւրակեաց շրջաններու, մեծագոյն պատուհասը դարձան գինովութեան, թղթախաղի, եղբայրասպան կոռւի վառարաններ հանդիսանալով ու երիտասարդութիւնը ապականելով, կործանելով նոյնիսկ հոգիէն՝ ինչպէս մարմինէն: Նոր գիւղը, Պարտիզակը տրտում վկայութիւններ էին այդ ոգիէն: Մեր կողմերը, անգործութեան, զուր սպառումին այդ օճախներն էին, որ կիները նետեցին բանուորութեան, գործարաններու մէջ հալումաչ ընող կեանքին: Ես աշխատեի եմ ութ տարեկանէս ասդին: Ու տասը չմըտած աղջնակը ինծի հետ պիտի աշխատէր այդ խոնաւ գործարաններուն մէջ լման տասնվեց ժամ, յաճախ գիշերը սկսեալ, մա՛նաւանդ ձիւն-ձմրան, որպէսզի հասնէինք ցամաք հացին, մետաքսը պատրաստելով հարուստներու միսերը փափկագեղ ընծայող, մերիններուն ապականումին, խանձումին, ճոռումին գնովը, վրայ տալով մա՛նաւանդ մանկութեան կուսութիւնը հոգիէ ու երազէ, երբ այդքան անարդարութիւն կը հիւսէինք մեր զգայարաններուն: Պզտիկ աղջիկները ինչպէ՛ս մաշեցան գործարանին տէր աղաներուն ցանկութիւններովը, որ ուրիշ վէպ է արդէն: Սպասուհիներուն դէպի Պոլիս recruitmentը՝ ուրիշ: Ստնտուներուն ողբերգութիւնը՝ ուրիշ:

Եղանակներուն արտօնութեամբը այդ մէկ հատիկ սրճարանը կը հաւաքուէին սանկ ու նանկ մարդեր: Տաղաւար մը, բարեկենդան մը, խոշոր ու խորունկ ձիւն մը բացառիկ առիթ էր այդ մոլտքը արդարացնող: Ուրիշ օրերու՝ միայն վաւերական, ամբողջ գեղին համահաճ հաւանութեամբը նուիրագործուած ծերունիներ, որոնց աչքին լոյսին սանկ հարիւրէն հարիւր մը զեղչուիլը կը մնար պայմանը այդ փառքին: Կամ որոնց ողնուծուծը դարձեր էր քմահաճ, գեղացին կ'ըսէր, ոսկորցած (գիրքերուն sclerosis) չարտօնելու չափ անհրաժեշտ շար-